

Մ Ի Ո Ն, Հ Ա Յ Ա Մ Ս Ա Գ Ի Ր

Գ. ՏԱՐԻ—ՆՈՐ ՇՐՋԱՆ

1930 — ՅՈՒՆՈՒՍԻՐ

ԹԻԻ—1

Կ Ո Ն Դ Ա Կ Օ Ր Հ Ն Ո Ւ Թ Ե Ա Ն (*)

ԿՆԻՔ ՀԱՅՐԱԳԵՏԱԿԱՆ

ԳԼՈՐԳ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ԲԻՍՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՒՍԱԳԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ, ԾԱՅԲԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԲ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵՏԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԵԱՅՆԻ,

ԱՄԵՆԱԳԱՏԻ ՊԱՏՐԻԱՐԲԻ ԱՍՏՈՒԱԾԱԿՈՒ ՏԵՂԻՈՅՆ ՍԱԳԽՄԱՅ ՇՆՈՐՀԱԶԱՐԳ ՏԵԱՌՆ ԵՂԵՇԷ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԳՈՒՐԵԱՆ, ՀԱՐԱԶԱՏԻ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ Ս. ԷԶՄԵԱՅՆԻ ԵՒ ՀՈԳԵԾԻՆ ԵՂԲՕՐ ՄԵՐՈՒՄ ԽՆԳԱԼ Ի ՏԷՐ:

Ի նամակէ Լիազօր Ներկայացուցչի Մերոյ յերապա՝ Տ. Թորգոմ Արքեպիսկոպոսի՝ զօր ստացաք աւս ի 21-ն Հոկտեմբերի տարույս, իրազեկ եղաք եքէ Միաբանութիւն Ռիսիւն Ս. Երուսաղեմի եւ նախկին առապետք Բո յղացեալ են յաւերժացուցանել զյիսնամեայ արիաջան գործունեութիւն Բո յոքելեան հանդիսիւ այսօր ի 27-ն Հոկտեմբերի տարույս:

Երկարածից ապ անխոնջ աշխատութեան Բո յուսուցչական ասպարիզի, ի վարդապետական քարոզչութեան, ի վարչական ղեկավարութեան հոգեւոր գործոց, ի ծանու պաշտաման Պատրիարքութեան նախ ի Կոստանդնուպոլիս եւ զարդիս ի Ս. Երուսաղեմ, խոնուն, իմաստուն եւ համես ընթացք Բո ի մեկնաւորական կեանս, առ ինչ են ձգեալ զաւր եւ համակրութիւն այնոցիկ անձանց, որք ունկնդրելով իմաստալից եւ հոգեւունջ քարոզաց քոց յեկեղեցիս, հաստատեալ են ի հաւաստ իւրեանց զառնալով ի թիւր նանապարհաց առ բարին եւ առաքինին. այլ եւ յուսուցչական ասպարիզի բնատուր ընդունակութեամբ քոյով եւ նոխացեալ զիտութեամբք վառեալ ի սիրս պատանեաց զօսումնասիրութիւն, պատրաստելով զնոսա լինել պիտանի գործիչ յազգային այլ եւ այլ ասպարէզս, յորոց ոմանք հետեւելով Բեզ՝ զգեցեալ են զսեմն հոգեւորականի, ուխտելով զանձինս իւրեանց նուիրել իրիսոնեական վարդապետութեան, ի շինել զպիսա ազգայնոց եւ նոխացուցանել զգրականութիւն հայկական արդիւնաւէտ վաստակօք իւրեանց:

Չեն անյայտ եւ ոչ նուազ շնորհալի ձիրք Բո ի գրական ասպարիզի, որով

(*) Մայր Աթոռէն հասած է այն կՈՆԴԱԿՐ, զոր Ամենայն Հայոց Վեմ. Հայրապետք յիշած էր իր նկատարին մէջ Ամեն. Ս. Պատրիարք Հօր Յորհրդանը շնորհաւորելու ստիպ:

5578-12

զպակասորդն փարզութեան բանիս ի բեմին եկեղեցոյ լրացուցեալ ես գրչաւ, ափռելով զարգասիս մնաց ֆոց յօրսս աշխարհի, դաստարակելով եւ գնեաւոր ազգայինս, որք անկարող էին ունկնդիր լինել բանիս փարզութեան:

Արժան իսկ է յիշատակել ասանօր նաեւ զհաւասարմութիւն Քո առ Մայր Արոտն Ս. Էջմիածնի, որոյ ուխտեալ միաբան ես եւ Քոյով եռանդեամբ հանապազ սասար լեալ բարձրացուցանել զպատիւ Մօրս յուսոյ, եւ օգնական՝ ի ներդրեան ժամանակիս:

Եւ արդ զոն եմք՝ տեսեալ եքէ Գօս, պատօնեալ Տեառն, բեռն ծանր եւ Խաչ զգաստացոցիչ յուս Քո կրեցեր յիսնամեայ ժամանակաւ, եւ այսօր շուրջ գՔեւ բոլորեալ կան դաստարակեալք ի Քէն, առ ծնողն իւրեանց, իբրեւ կրթական եւ դաստարակչական սերմանց անեցուցանողի ի հոգիս նոցա, որոց ի բովանդակ սրէ՛ զանկեղծաւոր յարգանաց հաւաստիս ընդ ալեացդ խառնեալ հիւսնն պսակ յուսոյ ի գլուխ Քո եւ ի նակաս, արբելով զայն ի ֆրսանց, որ ամօք բազմօք զփրսն աշխատարի կրեաց տուայտեալ ի մարմինն՝ այլ միտօ զօրացեալ ի հոգի, զի գլուծ Տեառն զիսէր կրել եւ զակօս վարդապետութեան նորա ծրել ի միսս եւ ի սիսս զաւակաց իւրոց հոգեւորաց:

Եւ Մեք, յաւուրս արեւմտի կենաց Մերում, յուեալ գայսպիսի երախտագիտական զգացմունս, որք առհաւասչեալ են բարեպատեական զգացմանց առ եկեղեցին, առ Ազգն եւ առ հոգեւոր պատօնեալս նոցին, յոյժ բերկրութեամբ լցուցանեն զսիրս եւ զհոգի Մեր, յուսողիւր առնեն զՄեզ ի ծանու պատեմանս եւ ի կոչմանս, եւ ի վեր բարձրացուցանեն զբազուկ Մեր առ Ամենաբարձրեալն առ ի օրհնել եւ զոհութիւնս մատուցանել Տեառն Մերում երկնաւորի, զի սացէ արեւատարիսն հոգեւոր եղբարցս եւ զաւակացս, առ յապայն եւս նովին եռանդեամբ գործել ի պայծառութիւնս եւ ի պատիւ Առաքելական եկեղեցոյ Հայաստանեայց, որոյ արժանաւոր զաւակք եւ պատօնեալք են:

Եւ այսօրիկ գործք պարծանք Մեր համարին եւ միսիրարիմք, եւ այսու օրհնառաք Հայրապետական Կոնդակաւս ողջագուրեմք գՔեզ, որպէս Հայր որդեւեր եւ խնդակից լինիմք ընդ խնդացեալ զաւակունս Մեր:

Ի վերջ բանիս յորդորեմք ասելով. Քաջալերեաց, պնդեա զգօտի ընդ մէջ Քո, եւ զի սակաւին ամք Քո ներեն՝ բաշխեա առատութեամբ զհանձարն շնորհեալն Քեզ ի Տեառնէ, զի կարացես ըստ Աւետարանական բանին համարձակապէս ասել. «Տէր, անա զմնասն ֆո տասն մնաս արարի»:

Հայցեմք ի Տեառնէ յարատեւել ի կեանս յառողջութեան, յանդորրութեան, եւ ի խաղաղութեան, զի զմտադրեալսն ի սրտիդ կարացես ի կատար ածել, ամէն:


(Ստոր.) ՎՆՏԱԼԻ ԳԷՈՐԳ Ե. ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

27-ն Հոկտեմբերի 1929 ամի,
Ըստ Տումարիս ՌՅՁ,
ի Հայրապետութեան Մերոյ ԺԹ. ամի,
յԱւարատեան Մայր Արոտ Ս. Էջմիածնի,
ի Վաղարշապատ,
Թ. 968

89348 ահ

149-98

7858-58



ST-870